

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԵՆ
ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՅՅԸ ԵՐՈՒՄԱՂԵՍ

Փետրուար 15-16 Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հովուապետական այցով եղաւ Երուսաղէմ: Հայրապետական պատուիրակութեան մաս կը կազմէին Պրագիլի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Տաթև Արք. Ղարիպեան, Արժանքինի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Գիսակ Արք. Մուրատեան, Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արեւելեան Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսամեան, Արեւելեան Թեմի Միջ-Եկեղեցական յարաբերութիւններու պատասխանատու՝ Գերշ. Տ. Վիգէն Արք. Այգազեան, Արարատեան Հայրապետական Թեմի Առաջնորդական Փոխանորդ՝ Գերշ. Տ. Նաւասարդ Արք. Կճոյեան, Մայր Աթոռի Դիւանապետ՝ Գերշ. Տ. Արշակ Եպս. Խաչատրեան եւ Հոգշ. Տ. Գարեգին Աբեղայ Համբարձումեան իբրեւ Գաւազանակիր:

Թէլ Ավիվի Պէն Կուրիոն օրակայանին մէջ Գարեգին Բ. Հայրապետին դիմաւորեցին Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան միաբանները, Իսրայէլի իշխանութիւններու եւ հայկական համայնքի ներկայացուցիչներ:

Գլխադիր Սուրբ Յակոբոս Մատրան մէջ աղօթելէ յետոյ, Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ Գարեգին Բ. Կաթողիկոսը օրհնութեան իր խօսքը ուղղեց հոգեւորականներուն, կրթական հաստատութիւններու սաներուն եւ հաւատացեալներուն:

Երեկոյեան Երուսաղէմի Հայոց Միաբանութիւնը Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետութեամբ նշեց Ամեն. Տ. Թորգոմ Պատրիարքի գահակալութեան 20, քահանայական 70 եւ ծննդեան 91ամեակը: Հանդիսութեան կը մասնակցէին Ղպտի, Լատին եւ Յոյն Ուղղափառ եւ այլ եկեղեցիներու ներկայացուցիչներ:

Հանդիսութեան ընթացքին կարդացուեցաւ Թորգոմ Պատրիարքին Հայաստանի Հանրապետութեան բարձրագոյն՝ «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանով պարգեւատրելու մասին Հայաստանի Հանրապետութեան Նախագահ՝ Սերժ Սարգսեանի հրամանագիրը: Նորին Սրբութիւնը իր օրհնութիւնն ու գնահատանքը յայտնեց վաստակաշատ հոգեւորականին եւ անոր փոխանցեց պետութեան բարձրագոյն պարգեւը:

Փետրուարի 16ին Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահութեամբ շարունակուեցաւ Պատրիարքութեան Միաբանական ժողովը: Քննարկուեցան Սուրբ Երկրին մէջ Հայ Եկեղեցւոյ ունեցուածքի պահպանման ու տնօրինման, ինչպէս նաեւ Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան առջեւ ծառայած այլ խնդիրներ:

Ամենայն Հայոց Հայրապետը եւ իրեն ուղեկցող պատուիրակութեան անդամները այցելեցին Սուրբ Յարութեան Տաճարը՝ խոնարհելու եւ իրենց ուխտը նորոգելու Տիրոջ Գերեզմանին առջեւ: